միշտ սուրին վրայ է, մարմինը՝ անսպի, ողջ տեղ չի կայ դրամի չափ, այլ խեւքով եւ խնայութեամբ:

Այս միջոցիս Թէոդորոս, որ ներս մտեր էր եւ Կամսարական, Շիրակ, Բագրատունեաց անունները լսելով կանգ առեր էր, առանց տեսնուելու Յուսիկէ առաջ անցաւ:

— Դու ուսկի՞ց գիտես,— ըսաւ,— որ Շիրակայ մէկ մասը գներ է Բագրատունեաց Տիկինը, ես որ այն կողմերն էի դեռ երեք ամիս կայ հազիւ՝ չիմացայ: Երկու գիշեր Շիրակաւան Կամսարականաց հիւր էի, նշան մը չի տեսայ:

Եթէ Յուսիկ միասին լինէր,— զրուցեց իշխանուհին ծիծաղելով,— շատ նշաններ կը տեսնէիր…— Եւ յանկարծ շուրջ եւ տխուր կերպարանք առնելով,— բայց Կամսարականը սելով չանցնինք, Բիւրեղի համար ձայներ կան թէ Վարդանաբերդի քանդուելուն չէ կրցեր ազատիլ, ոմանք կ'ըսեն թէ գերի տարեր են ընտանեօք, ոմանք կ'ըսեն թէ ջարդուեր են: Դու, իշխան, տեղեկութիւն չունի՞ս:

— Ինչպէ՞ս չունիմ,— պատասխանեց Թէոդորոս դառնութեամբ:— Երանի՛ թէ հիւր չլինէի գիշեր մը Վարդանայ բերդ եւ անգամ մը եւս տեսած չլինէի այդ հրեշտակային կինը:

— Ուրեմն ճշմարի՞տ է իւր մահը,— ըսաւ Սէթայ դողալով եւ ոտք ելնելով:

— Տուր եւ աղջկան մարմինը լճին մէջեն հանէր են:

— Ո՛հ խեղճ Բիւրեղ, թշուա՛ռ մայր,— զրուցեց Սէթայ եւ հեկեկանոք սկսաւ լալ երկու ձեռաց մէջ երեսները ծածկելով:

— Ես գիտէի թէ ինչչափ ցաւ պիտի պատճառէ քեզ այս լուրը, եւ անոր համար մինչեւ հիմա լռեցի:

— Բայց այդ ճիւաղները՞, այդ գազանները՞…

— Այդ գազաններուն ձեռք չընկնելու համար իւր նորահաս աղջկան հետ ինքզինք նետեր է լիճը եւ խեղդուեր:

— Ռդին, Գրիգոր՝ որ մեզի հիւր էր՝ նա ի՞նչ եղեր է: